ւոր՝ բարեկիրթ և ուսումնական եկեղեցականներ պատրաստած չէ։

Ուստի գիտնալով մեր Եկեղեցականաց ինչպէս նաև ժողովրդեան պակասութիւնքը՝ պէտք է ջանամք գոնէ ներկայ ժամուս սերունդէն սկսեալ և ապագայի համար օրինաւոր և բարեկարգ դպրոցներ և վարժարաններ ունենալ և նոցա մէջ ըստ արժանւոյն բանալ Հայորդւոյն մտքերը և մշակել և բեղմնաւորել ազգային դաստիարակութեամբ և լուսաւոր և վսեմ գաղափարներով։

Մեր գլխաւոր հաւանելիքն է ՓԷԷՓ——ԲԷ—ՆԸ. երբ կը յաջողիմք ազնուութեան յաղթել, յայնժամ գիւրին կը լինի եկեղեցականաց արժէք և նշանակութիւնը իմանալ և զգալ, որոց ազդեցութիւն և պատկառելի առաւորութիւն մեր Ազգի համար նախրակյան և գեղեցիկ ներգործութիւն միանգամայն անհրաժեշտ կարևորութիւն ունի։ —

Այս առթիւ պիտի յարակցեմ, զի մեր Եկեղեցականութեան բարեկարգ վիճակը և Եկեղեցւոյ պայծառութիւնը առաւել հիմնաւորև ընդհանրատարած կազմելոյ և փութացնելոյ համար՝ արժան է խորին ուշադրութիւն և ամենատևսակ աջակցութիւն տալ Մայր Աթոռոյս նորակառոյց Վարդապետարան — Ճեմարանի, յորում Վեհ. Հայրապետի բարենպատակ անխոնջ ձիգ և ջանքեր կեդրոնացած են Ազգիս յառաջադիմութեան և ապագայի համար, որպէս զի պայծառփայլին և փառաւորուին Հայութիւն և Հայաստանեայց Եկեղեցին՝ ինչպէս նա և Եկեղեցականք։ —

ՂԱԶԱՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

# ՊԱՏՄԱԿԱՆ

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

### ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՎԱՆՕՐԷԻՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՆԱՀԱՆԳԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ի ՇՐՋԱՊԱՏՍ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ։

Ամ Տեառն.

Արարատեան կաթուղիկէ Մայր Եկեղեցի Ս. Էջմիածին յԱրագածոտն գաւառի ի Վաղարշապատ, շինեալ ի Տրդատայ արքայէ . . . . . 305

Նորոգեալ ի Վահանայ Մամիկոնեան 483

Եւ ի Կոմիտաս Կաթուղիկոսէ . . 618

Ամաղուայ Նորավանք Ս. Նախավկային ի Վայոց ձոր՝ ի Ստեփաննոս Եպիսկոպոսէ Սիւնեաց . . . . . 936

Ամենափրկիչ Հին-Ջուղայու յԵրնջակ գաւառի ի Պ. Վահրամայ . . 1271

Այրի վանք Ս. Գեղարդայ ի Գառնի ի Ս. Սահակ Պարթևէ, իսկ փորուածոյ եկեղեցիքն ի Պռոշ իշխանէ . . 1288

Անբերդոյ սուրբ Աստուածածին յԱրագած լերին ի Վաչէ իշխանէ Հայոց . 1210

Անւոյ կաթուղիկէ Եկեղեցի ի Սմբատ արքայէ և ի Կատրամիդէ թագուհւոյն Գագկայ . . . . 1001

Աշտարակայ Ս. Մարիանէ կուսի վանք յԱրագածոտն ի Յակովբայ Երիցուէ . 1310

Աստապատայ Ս. Վարդանայ վանք ի Նախիջևանայ գաւառին, նորոգեալ ի խոճայ Սաֆարէ . . . 1655

Աստապատայ Կարմիր վանք սրբոյն Ստեփաննոսի . . . . . 977

Աստուածընկալ սուրբ Նշան ի Նիգ գաւառի ի Քուրդ իշխանէ . . . 1244

Արամնայ Ս. Յակոբ ի Կոտայց գաւառի յԱ. Դաւիթ Կաթուղիկոսէ . 731

Արգինայի վանք ի Շիրակ գաւառի յԱ. Խաչիկ Կաթուղիկոսէ . . . 972

Արզաքանայ Ս. Աստուածածնի վանք Նեղոսի ի Հայրապետ կրօնաւորէ . 1271

Արկնազու սուրբ Խաչ վանք, ուխտատեղի հռչակաւոր ի Վայոց ձոր, ի Բիւրեղ տիկնոջէ Սիւնեաց . . . . 629

Վերաշինեցաւ յաւուրս Վեհ. Գէորգ Դ. Կաթուղիկոսի . . . 1871

Արփայու Ս Ստեփաննոսի վանք ի Վայոց ձոր ի Ցօլհ. Եպիսկոպոսէ Օրբելեանց Սիւնեցւոյ . . . . 1321

Աւանայ Ս. Աստուածածին Ծիրանաւոր անուանեալ, ի Դաւթայ որդւոյ Գեմեր արքայի Վրաց . . . 1285

Բձնոյ վանք Ս Աստուածածին ի Նիգ գաւառի, ի Գրիգոր Մագիստրոսէ . 1031

Գայիանեայ կուսի վանք ի Վաղարշապատ յԱրագածոտն գաւառի ի Ս Գրիգոր Լուսաւորչէն, կոփածոյ քարամբք շինեալ յԵզր Կաթուղիկոսէ . . . 630

Գետարգելոյ Ս. Նշանի վանք ի Կոտայս ի Գրիգոր Է. Կաթուղիկոսէ . . 1293

Գետկայ Ս. Աստուածածնի վանք ի Գուգարաց նահանգի ի Մխիթարայ Գօշէ և ի Վաղթանգ իշխանէ տեառն Հաթերքայ . . . 1191

Գնդեվանք ի Վայոց-ձոր ի Սոփիայ տիկնոջէ Սմբատայ իշխանի Սիւնեաց . 936

Գոսղու բարձրաքաշ Ս. Աստուածածնի վանք ի Տաշիրս, ի Մարծպանայ որդւոյ Սարգսի Մամիկոնեանց . . . 1221

Եղուարդայ Ս Գէորգ Զօրավարի վանք յԱրագածոտն գաւառի ի Գրիգոր իշխանէ Մամիկոնեան . . . 450

Երնջակայ Ս. Կարապետի վանք յԵրնջակ, յԵսայի և ի Ղազար վարդապետաց 1551

Երևանայ Անանիայ առաքելոյ վանք ի Կոտայս (այժմ զօրավար) նորոգեալ ի Մովսէս Կաթուղիկոսէ . . . 1620

Էջառիս կամ Կեչառուաց վանք Ս. Աստուածածին ի Վարաժնունիս, ի Գրիգոր Մագիստրոսէ . . . . 1031

Եւ յԱպիրատ իշխանէ . . 1044

Թալիշոյ Կաթուղիկէ վանք ի յԱրագածոտն գաւառի, ի Գրիգոր իշխանէ Մամիկոնեան . . . . . 671

Թալինու կաթուղիկէ վանք, անդ. ի Սմբատայ Շահնշահէ . . 1040

Թանահատից Ս. Նախավկայի վանք ի Վայոց ձոր, ի Մխիթար կրօնաւորէ . 151

Թեղենեաց վանք ի Նիգ գաւառի, ի Տուրքիկ վանահօրէ . . . 950

Թովմայի առաքելոյ վանք ի Գողթան գաւառի ի Բարթուղիմեայ առաքելոյ, նորոգեալ ի սրբոյ Գրիգ. Լուսաւորչէն . 305

Լմբատայ Ս. Ստեփաննոսի վանք ի Շիրակ ի Զաքարիայ Ամիր սպասալարէ 1191

Խոռակերտի վանք ի Տաշիրս ի Խոռ Նահապետէ, նորոգեալ ի Ստեփաննոս իշխանէ . . . . 1272

Խոտակերաց Ս Աստուածածնի վանք ի Վայոց ձոր, ի Սմբատ իշխանէ և յամուսնոյ նորա . . . . 936

Խորվիրապայ Ս. Գրիգոր ի գուբին Դվնայ ի Տրդատայ արքայէ, նորոգեալ ի Վահանայ Մամիկոնեան . . 500

Կամրջաձորոյ վանք Ս. Գրիգորի յԱրշարունիս ի տանուտէրց գաւառին . 550

Կարբիհի Ս. Անդրէ առաքելոյ վանք ի Վարաժնունիս, նորոգեալ ի Մեսրովբ Եպիսկոպոսէ . . . . 1611

Կարմիր վանք Ս. Լուսաւորչի ի Շիրակ, ի Ճոն Սարգսէ . . . . 985

Կոթայ Ս. Աստուածածնի վանք ի Գեղարքունիս, ի Սուփան Գրիգոր իշխանէ 851

Կուաշաւանի (Կոշայ) Ս. Ստեփաննոս, այժմ սուրբ Գէորգ յԱրագածոտն, յԱշոտ իշխանէ . . . . 980

Հաղարծնոյ Ս. Աստուածածնի վանք ի Գուգարս, յԻվան Աթաբեկէ . . 1071

Հաղբատայ Ս. Նշանի վանք ի Տաշիրս յԱնուշ թագուհւոյ ամուսնոյն Աշոտ արքայի . . . . . 967

Հաւուց Թառայ Ս Ամենափրկիչ ի Գառնի, ի Գրիգոր Մագիստրոսէ . 1013

Հառիճոյ Ս. Գրիգոր ի Ճոնէն Սարգսէ

Եւ Ս. Աստուածածնի վանք ի Զաքարեայ սպարապետէ . . . . 1200

Հերհերու Ս Սիոնի ի Վայոց ձոր ի Պ. Վահրամայ որդւոյ Վասակայ . 1321

Հոռոմայրի Ս. Նշանի վանք ի Տաշիրս ի Զաքարեայ սպարապետէ . . 1187

Հոռոմոսին Ս. Յովհաննէս վանք ի Շիրակ, յութերորդ դարու, իսկ Ս Գէորգ՝ ի Գագկայ Շահնշահէ . . . 934

Հռիփսիմեանց Ս. Կուսանաց վանք ի Վաղարշապատ ի Ս. Գրիգոր Պարթեւէն, նորոգեալ ի Կոմիտաս Կաթուղիկոսէ . 618

Մակարայ վանք ի Գուգարաց նահանգի, ի Հ. Յովհաննիսէ . . . 1208

Մաղարթայ վանք Ս. Ստեփաննոսի ի գաւառին Նախիջեւանայ ի Բարդուղիմէոյ առաքելոյն, նորոգեալ ի Բարկէն Եպիսկոպոսէ . . . . . . 976

Մայրավանք ի Վարաժնունիս, ի Յովհաննէս փիլիսոփայէ . . . 635

Մարմաշինու վանք ի Շիրակ, ի Վահրամայ Պահլաւունւոյ . . 988

Մարտիրոսաց վանք ի Վայոց ձոր, ի Մաթէոս վարդապետէ . 1286

Մաքենեաց Ս. Աստուածածնի վանք ի Գեղարքունիս, ի Գրիգոր Սուփան իշխանէ 851

Մուղնւոյ սուրբ Գէորգայ վանք յԱրագածոտն գաւառի, ի Յովհաննէս վարդապետէ . . . . 1664

Յովհաննավանք յԱրագածոտն, ի Ս. Գրիգոր Պարթեւէն . . . . 310

Նորոգեալ ի Վաչէ և ի Քուրդ իշխանաց . . . . . . 1250

Նորատուսաց վանք ի Գեղարքունիս, ի Սահակ իշխանէ Սիւնեաց . . . 833

Շաղատայ Ս Ստեփաննոսի վանք, ի Վայոց ձոր, ի Բաբկենէ Սիւնեաց տեառնէ 800

Շատինաց վանք, անդ, ի Յակոբայ Ջուղայեցւոյ . . . . . 1656

Շողագայ Ս Առաքելոց վանք ի Գեղարքունիս, ի Մարիամ դստերէ Աշոտ արքայի . . . . 880

Շողակաթ վանք ոկար կուսին ի Վաղարշապատ, ի Ս Գրիգոր Պարթեւէն, նորոգեալ յԱղամալ իշխանէ Շոռոթեցւոյ 1694

Որոտնայ վանք ի Սիւնիս. ի Թոռանց Տարսայիճ իշխանին . 1311

Ուշւոյ սուրբ Սարգիս յԱրագածոտն, ի Շինող կոչեցեալ Գ. Ներսէս Կաթուղիկոսէ, նորոգեալ յԱւագ Սարգսէ . . 1262

Սաղմոսավանք — սուրբ Սիոն յԱրագածոտն, ի Վաչէ իշխանէ . . . 1215

Սանահին — սուրբ Աստուածածին ի Տաշիրս, յԱնուշ թագուհւոյ Աշոտ Ողորմածին թագաւորի . , . . 962

Սոթայ Ս. Բեդղեհէմի վանք ի Գեղարքունիս, ի Պարոն Առաքելէ . . 1276

Սեւանայ Ս. Աստուածածին ի Գեղարքունիս ի Ս. Գրիգոր Լուսաւորչէն, նորոգեալ ի Մարիամայ դստերէ Աշոտ թագաւորի՝ ամուսնոյ Գաբուռն Վասակայ . 874

Վանավանի վանք ի Վայոց ձոր, ի Շապհոյ Բագրատունւոյ որդւոյ Աշոտոյ արքայի . . . . . 903

Վանանդայ վանք ի Գողթան՝ յաւուրս Թարգմանչաց ի վերայ աշակերտի Բարդուղիմէայ առաք. Նորոգեալ ի Մաթէոսէ Վանանդեցւոյ . . , . 1700

Տաթեւու Ս. Ստաթէի առաքելոյ վանք, ի Սիւնիս, յԱշոտոյ որդւոյ Փիլիպպէ Գահերէց իշխանին Սիւնեաց . 895

Տեղերու Ս. Աստուածածին, յԱրագածոտն ի Մամայ խաթունէ յամուսնոյ Վաչէ իշխանի . . . . 1232

Ցախաքարայ վանք, Դօշավանք անուանեալ ի Վայոց ձոր զառաջինն շինեալ ի Հայր Վարդիկէ յանուն Ս Կարապետի 1041

Այս ի Տարսայիճ իշխանէ յեղբօրէ Սմբատայ արքայի և յամուսնոյ նորա ի Մինայ խաթունէ . . . 1251

Փարպուայ սուրբ Գրիգոր յԱրագածոտն, ի սուրբ Գրիգոր Պարթեւէն նորոգեալ յԱղբուղայ իշխանէ . . . 1264

Փառակայ վանք Ս. Յակոբ՝ ի Գողթան, ի Փառկեցի ժողովրդաց . . . 1701

Սուրբ Մամասայ վանք ի Վայոց ձոր

Նորոգեալ ի Սէթ կրօնաւորէ . . 1251
Քարաշամ Ս. Աստուածածնի վանք (Ալքիլիսէ) ի Նիգ գաւառի, ի Մամայ խաթունէ յամուսնոյ Վաչէ իշխանի . 1211
Օձնայ Ս Աստուածածնի վանք ի Տաշիրս, շինեալ ի Յովհան իմաստասիրէ . 735
Օշականայ սուրբ Մեսրովբ Թարգմանչի եկեղեցի յԱրապածոտն, ի Վահանայ Ամատունւոյ . . . . 441
Նորոգեալ ի Պարոն Սահմատինէ . 1277

ԱԲԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ.

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԱՆԴԱՄԱԶՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԶՆՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԴՈՑ.

## (ԱՆԱՏՈՄԻԱ ԵՒ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ)

### Նախնական տեղեկութիւն.

Ի տես մի կենդանի էակի, մենք նախ և յառաջ նշմարում ենք նորա ձևն, կազմակերպութիւնն, օրգանական կազմուածքըն և սոցա կենդանական գործողութիւնքըն։

**Անատոմիա** (ana temno. անդամահատել) ուսուցանում է մեզ ճանաչել կենդանի էակաց կազմութիւնն։

**Ֆիզիոլոգիա** (phnsis logos) ճառում է այն երևոյթներն՝ որոց ամբողջութիւնից կազմակերպվում է կեանքն։

**Կենդանի էակ.** — Բոյսերն և կենդանիքը որոշողն բնութեան միւս մարմիններից՝ **կեանքն է.** այս ներքին շարժականութիւնըն, որոյ իրողութիւնն անծանօթ է մեզ, թէև նորա ներգործութիւնքն հարուածէին մեր զգայարանքն։ Միայն կենդանի էակաց կպատկանի՝ իւրեանց տեսակներից արգիւնաբերելու, և զկնի ծննդառութեան մի ժամանակամիջոց և մի սահմանեալ ձևով ապրելու կարողութիւնն, քարշելով դէպ իւրեանց բաղադրութիւնքն օտար գոյացութիւնք և դարձնելով արտաքս իւրեանց յատուկ գոյացութեան մի մասն։ Այս փոխանակութիւն, այս շարժողութիւն նիւթերի, որ բնալուծվում է դէպ յարտաքին աշխարհը՝ կազմում է **սնուցում** (nutrtion), որոյ ներքնային աշխատութիւնն անտեսանելի է մեզ, թէև էութիւնն յայանի՝ անթիւ իրողութիւններով։ Խօսելով վասն կենդանեաց, մանուկն իւր ծննդառութեան ժամանակ կշռում է միջնահաշուով 3 հազարամեթր, և 25 տարուց յետոյ, յերիտասարդութեան, իւր կշիռն անցանում է յիսուն հազարամեթրից։

Մի քանի ժամանակ յետ մեռնելով սընունդից, մարմինն փոխանում է, կշիռն նուազում է, ուրեմն նա թոյլ է տուել իւր հիւթանիւթի մի մասն և կորուստն զգալի է եղել այն պատճառաւ՝ որ նա դարմանել չէ նորան սննդառութեամբ։

Սանկտօրիուս, որ իւր կենաց մի մեծ մասն կշռքի մէջ անցուց, հաստատել է իւր քննողութեամբք, որ **անզգալի արտաշնչութիւնն** (transpiration miensll) կամ **քրտնաքամութիւնն** (peropiration) պատճառում է մարդկային մարմնին մեծաքանակ կորուստ։ Նա գտել է՝ որ եօթն ժամուայ միջոցում 1 հազարամեթր արտաշնչութիւն է լինում։

Մի առողջակեաց և միջակահասակ մարդ կորցնում է իւր կշռից հանապազօր 2ից մինչ 3 հազարամեթր, **մորթային** (cuta-